ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

01/02/2021 N 06/11.2/393-2021

ՀՀ Գեղարքունիքի մարզ,
Վարդենիս համայնքի ղեկավար
պարոն Արամ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ

2021թ. հունվարի 11-ի
N3-գրություն

Հարգելի պարոն Մելքոնյան

Ձեզ ենք տրամադրում ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-005-0415-0012 ծածկագրով 0.23087 հա մակերեսով հողամասն, արևային ֆոտովոլտային կայան կառուցելու համար, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրից էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

Առդիր՝ 3$այլ:

Հարգանքով՝

X

ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Հովիկ Դավթյան, հեռախոս՝ 011 621 725,
Կատարող՝ Լիլիթ Պալյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 9
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
05-005-0415-0012 ծածկագրով 0.23087 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	05-005-0415-0012 ծածկագրով 0.23087 հա մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Միաժամանակ անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- հողաշինարարական գործում առկա «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված պահանջը՝ հողամասի հարակից տարածքով անցնում է Կողմնատար ԳԲԿ Վարդենիս d=219մմ մայրուղային ստորգետնյա գազատարը և շինարարական աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 16 հուլիսի 2015թ. N787-Ն որոշմամբ հաստատված «Գազի տնտեսությունում գազատարների և դրանց վրա գտնվող ինժեներական կառույցների անվտանգության գոտիների չափերի ու դրանց օգտագործման» կարգի պահանջներով, մասնավորապես ապահովել գազատարի առանցքից 30մետր անվտանգության գոտի:

4. Վարդենիս համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ, Կոմիտեի նախագահի

պարտականությունները կատարող՝

Ա. Ղուլարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հ. Դավթյան

Երևան, «25» «հունվարի» 2021թ.